ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5447-Ա « 06 » նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, Հ.ԷՄԻՆԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ Հ.7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲԻ ՋԻԳՅԱՐՋՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱԿ ՀԱԿՈԲԻ ՋԻԳՅԱՐՋՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթուր Հակոբի Ջիգյարջյանի (ծնված 18.10.1973թ.) և Արտակ Հակոբի Ջիգյարջյանի դիմումը (ծնված 26.11.1976թ.) (16.09.2026թ. հ.Դ-99944-26): Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ.Էմինի փողոց 1-ին նրբանցք հ.7 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1334.3քմ, որից 1185.8քմ մակերեսով հողամասը Արթուր Հակոբի Ջիգյարջյանին և Արտակ Հակոբի Ջիգյարջյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.06062017-01-0182 տրված 06.06.2017թ.):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 16.10.2026թ հ.ԱՏ-16102026-01-0475, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 02.11.2026թ. հ.11315 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 04.11.2026թ. հ.20-Ել-Դ-99944-26 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ.Էմինի փողոց 1-ին նրբանցք հ.7 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ.Էմինի փողոց 1-ին նրբանցք հ.7 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արթուր Հակոբի Ջիգյարջյանի և Արտակ Հակոբի Ջիգյարջյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1185.8քմ մակերեսով հողամասին կից 148.5քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 148.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի h.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան, Հ.Էմինի փողոց 1-ին նրբանցք հ.7 հասցեում գտնվող 1334.3քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ